

Հաշվետվություն

Ողջունում եմ Ձեզ, հարգելի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ,
հարգելի մասնակիցներ

Այսօրվա մեր հավաքի նպատակն է ավելի թափանցիկ դարձնել Տեղական ինքնակառավարման մարմնի՝ համայնքպետարանի գործունեությունը և ապահովել բնակչության ներգրավվածությունը տեղական ինքնակառավարմանը: Այսօր մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի ամփոփենք անցած տարվա մեր իրականացրած ծրագրերը և կատարած ծախսերը, որպեսզի մեր համայնքի յուրաքանչյուր քաղաքացի վստահ լինի, որ իր վճարած ամեն մի դրամը ծախսվել է համայնքի հիմնախնդիրների լուծման համար:

Անցած 2018 թվականը համայնքի համար կարելի է համարել հաջող, քանի որ համայնքի բյուջեի նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումը ընդհանուր առմամբ կատարվեց: Սակայն պետք է նշեմ, որ հողի հարկի հավաքագրման մակարդակը բավականին ցածր էր՝ 56.4 %: Այս ցուցանիշի ցածր մակարդակը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Համայնքի յուրաքանչյուր բնակիչ պետք է գիտակցի, որ համայնքը մեր տունն է, և յուրաքանչյուրը պարտավոր է իր ներդրումը բերել ի շահ համայնքի զարգացման և բարգավաճման, հանուն բարեկեցիկ կյանքի:

2016 թվականի դեկտեմբեր ամսից ստանձնելով Գեղամավան համայնքի ղեկավարի պարտականությունները, մշտապես իմ առջև խնդիր եմ դրել համայնքը դարձնել ավելի բարեկարգ, ավելի լուսավոր ու հարմարավետ: Այդ ժամանակից ի վեր՝ 2017 և 2018 թվականներին համայնքում իրականացվել է հսկայական աշխատանք, ինչի ականատեսն եք եղել Դուք:

1. Ամբողջությամբ վերանորոգվել և խճապատվել են համայնքային նշանակության բոլոր ճանապարհները,

2. Կառուցվել է գրեթե 5 կմ երկարությամբ փողոցային լուսավորության ցանց և այժմ արդեն համայնքի փողոցների մոտ 80 %-ը ունի գիշերային լուսավորություն:

3. Բազմաբնակարան շենքերի թաղամասում կառուցվել է 320 մ երկարությամբ ճանապարհի պաշտպանիչ պատնեշը, ինչը հնարավորություն տվեց վերջնականապես առանձնացնել ճանապարհի երթևեկելի մասը և բարեկարգել թաղամասի ճանապարհները: Այս ծրագիրն իրականացվել նաև

համայնքի բնակիչների համատեղ ջանքերով՝ համայնքապետարանի կողմից ձեռք են բերվել շինարարական նյութերն, իսկ աշխատանքներն իրականացվել են բնակիչների ուժերով:

4. Ամբողջությամբ վերակառուցվել և ընդլայնվել է համայնքի գերեզմանատան ցանկապատը, բարեկարգվել տարածքը:

5. Հիմնանորոգվել, լայնացվել և խճապատվել է Գերեզմանատան ճանապարհը, իսկ 2018 թվականին, մարզապետարանի կողմից համայնքին տրամադրված ֆրեզված ասֆալտի միջոցով, համայնքի միջոցներով ամբողջությամբ ասֆալտապատվել է գերեզմանատուն տանող ճանապարհն ու գերեզմանատան անցուղիները, ինչպես նաև ասֆալտապատվել են համայնքային ճանապարհների որոշակի հատվածներ:

6. Բազմաբնակարան շենքերի թաղամասում կառուցվել է մանկական խաղահրապարակ և կահավորվել է ժամանակակից խաղասարքերով:

7. Համայնքում մշտապես իրականացվել է աղբահանության, ձնամաքրման աշխատանքներ:

8. Իրականացվել են սանիտարական մաքրման աշխատանքներ: Վերացվել են համայնքի մերձակա տարածքներում, ճամփեզրերի ապորինի աղբավայրերը:

9. Համայնքում դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է սոցիալական աջակցություն:

10. Համայնքում կառուցվել է հասարակական գուգարան:

11. Իրականացվել է միջինը օրական 6- ժամյա ջրամատակարարում, ինչը համայնքի քայքայված ջրամատակարարման ցանցի պայմաններում բավական լավ ցուցանիշ է: Ուժում են տեղեկացնել, որ արդեն հաստատվել է Գեղամավանի ջրամատակարարման ցանցի վերանորոգման ծրագիրը, որտեղ

համայնքն ևս ունի 4 միլիոն դրամի ներդրման պարտավորություն: Այն իրականացվելու է այս տարի, ինչի արդյունքում կունենանք ավելի երկարատև և որակյալ ջրամատակարարում:

12. Անցած տարի իրականացվեց նաև Գեղամավանի վերաբնակեցման 190-ամյակին նվիրված հուշակոթողի կառուցումը, որի ծախսերը հոգաց Ռուսաստանաբնակ հայ գործարար Արմեն Սիմոնյանը:

Գեղամավան համայնքում 2017-2018 թվականներին իրականացված ծրագրերը կատարված աշխատանքները

h/h	Անվանումը	Ֆինանսավորող կազմակերպությունը	Արժեքը (հազ. դրամ)՝ որից		Ընդամենը
			2017թ	2018թ	
1	Փողոցային լուսավորության ցանցի կառուցում՝ 5 կմ երկարությամբ	Համայնքի բյուջե	6200.0	6700.3	12900.3
2	Համայնքային ճանապարհների վերանորոգում՝ հարթեցում և խճապատում (ընդհանուր՝ 4 կմ երկարության)	Համայնքի բյուջե	2838.0		2838.0
3	Գերեզմանատան ցանկապատի վերակառուցում՝ 450 գմ, տարածքի բարեկարգում՝ 4,5 հա	Համայնքի բյուջե	975.0		975.0
4	Մանկական խաղահրապարակի կառուցում, կանաչապատում և կահավորում	Համայնքի բյուջե	956.0	1969.0	2925.0
5	Ճանապարհի պաշտպանիչ պատնեշի կառուցում- 320 գմ,	Համայնքի բյուջե	947.0		947.0
6	Գերեզմանատան ճանապարհի, անցուղիների և համայնքային ճանապարհների ասֆալտապատում 4000 քմ (ֆրեզված ասֆալտով)	Համայնքի բյուջե		960.0	960.0
7	Հասարակական գուգարանների կառուցում	Համայնքի բյուջե		200.0	200.0
8	Աղբահանություն	Համայնքի բյուջե	720.0	720.0	1440.0
9	Ձնամաքրում	Համայնքի բյուջե	600.0	0	600.0
10	Սոցիալական աջակցություն	Համայնքի բյուջե	2000.0	880.0	2880.0
11	Նախագծա-նախահաշվային աշխատանքների ձ/բ	Համայնքի բյուջե	200.0	1250.0	1450.0
12	Համայնքի հիմնադրման 190- ամյակին նվիրված հուշակոթողի կառուցում	Բարերարի միջոցներով		5000.0	5000.0

